ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑ

# «Արցախը պետք է դառնա առանձին սուբյեկտ Միության կազմի մեջ»

**Մեր սեփ. թղթ. Գայանե Աֆրիկյանը զրուցեց «Արցախ» հայրենակցական միության նախագահ Յուրի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ եւ վարչության անդամ Լենսեր ԱՂԱԼՈՎՅԱՆԻ հետ:**

ՀԱՐՑ. Դուք դեմ էիք Գերագույն խորհրդի ընդունած վերջին որոշմանը:

ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Մեզ համար, անկեղծ ասած, շատ մեծ հարված էր այդ որոշումը, որովհետեւ մեծ սպասելիքներ ունեինք Արցախի հիմնահարցի լուծման կապակցությամբ: Ես կարծում եմ, որ այդ փաստաթղթով Հայաստանը լրիվ մի կողմ քաշվեց՝ մենակ թողնելով Արցախին: Մենք այս իրավիճակից դուրս գալու ելք ենք փնտրում: Իսկույն որոշեցինք մեր դիրքորոշումը, այն արտահայտեցինք հայտարարությամբ՝ ուղղված Գերագույն խորհրդին: Այդ փաստաթղթում հիմնականում ասում ենք, որ Հայաստանի կառավարությունը փորձում է ազատվել Արցախի հոգսից եւ կարծեցյալ անկախության գնալ՝ թեթեւացած ոգով: Մենք եկանք այն եզրակացության, որ երբ Հայաստանը նկատի ունի, թե կազատվի կենտրոնի հարձակումներից, ապա դա ճիշտ չէ, որովհետեւ Մոսկվան չի թողնի Հայաստանին նույնիսկ Արցախից հրաժարվելու:

**Հ. Այնուամենայնիվ, չեմ ուզում հավատալ, որ Գերագույն խորհուրդը հրաժարված է Արցախից: Ցավոք, պետք է փորձել հասկանալ նրանց:**

Յ. Հ. – Հարցի ձեր ձեւակերպումը ուղիղ պատասխան է պահանջում, բայց բոլոր վերլուծությունները ցույց են տվել, որ գործողությունները հենց այդ են նշանակում: Անկախ նրանից, թե ինչ ենք մենք ուզում, Ադրբեջանը երբեք չի գնա բանակցությունների:

**Հ. Ձեր հետագա ծրագրերը:**

Յ. Հ. – Անկեղծ ասած, շատ եմ դժվարանում, որովհետեւ իսկապես, այս որոշումը մեզ համար անակնկալ էր: Իհարկե, առաջին հերթին մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի սատար կանգնենք Արցախի մեր հայրենակիցներին: Ամեն գնով, ամեն ժամանակով, ինչ էլ լինի:

ԼԵՆՍԵՐ ԱՂԱԼՈՎՅԱՆ. Ես գտնում եմ, որ այս հարցը զուտ քաղաքական հարց է, եւ այսօրվա մեր անհաջողությունները մեր քաղաքական ոչ ճիշտ դիրքորոշումների, կոպիտ սխալների արդյունքն են: Ցանկանում եմ շեշտել հետեւյալ փաստը. այն, ինչը հիմա հրապարակվում է, թե արցախցիներն ուզում են գնալ բանակցությունների՝ չի համապատասխանում իրականությանը: Այդ քաղաքականությունը մշակվել է Հայաստանում նոր կառավարության կողմից եւ օգոստոսի վերջից սկսած ստիպում է, որ Արցախն ինքը գնա այդ քայլին: Դեռ սեպտեմբերի վերջերին, Հայաստանի ԳԽ նախագահությունը ներկայացրել էր առաջարկություն, որպես որոշման նախագիծ (որը պետք է փետրվարի 18-ին ստորագրվեր), ուր հստակ նշված էին այն կետերը, որ նրանք հիմա ընդունում են. Արցախը պետք է մնա Ադրբեջանի կազմում եւ այլն... Զարմանալին այն էր, որ երբ այդ հարցը քննարկվում էր, պարզվեց, որ Գերագույն խորհուրդը դրանից տեղյակ չէ, բայց չէ որ դա ստրատեգիական հարց է եւ առանց Գերագույն խորհրդի քննարկման, առանց ժողովրդի կարծիքը հարցնելու փաստաթուղթ ներկայացնելը չգիտեմ ինչպես կարելի է որակել: Դարձյալ հարցը մնում է Հայաստան-Մոսկվա հարաբերությունների հարց: Մոսկվան թույլ չի տա, որ Ադրբեջանն ու Արցախը գնան բանակցությունների, քանի դեռ Հայաստանը չի փոխել իր քաղաքական դիրքորոշումը: Մենք պետք է հաշվի նստենք այն բանի հետ, որ Հայաստանը ըստ Մոսկվայի ռուսական կայսրության տարածք է, այս առումով՝ հնարավոր է այնպիսի տարբերակ, երբ գործի Հայաստանը առանց հայերի դույլը: Ցանկացած ուրիշ տարբերակ նշանակում է գնալ առճակատման:

**Հ. Ինչի՞ է հասել մինչեւ օրս ձեր միությունը:**

Լ. Ա. – Մեր միությունը, ըստ էության, մինչեւ այս տարվա հունվարը զբաղվել է զուտ տնտեսական բարեփոխումներով. կոոպերատիվներ էինք կազմակերպում Արցախում, Գետաշենում եւ այլն: Սակայն հարցի քաղաքական կողմին ուշադրություն չդարձնելը մեծ վնաս հասցրեց շարժմանը: Հունվարից հետո մենք հասկացանք, որ առանց քաղաքական դիրքորոշումների չի կարող լինել ոչ մի տնտեսական նվաճում: Դրա փայլուն օրինակը Գետաշենն է, որտեղ, ըստ էության, բոլոր ներդրումները կորան: Այս տեսակետից «Արցախ» հայրենակցականն ավելի ակտիվ է: Իհարկե, պաշտոնապես քաղաքական կազմակերպություն չենք համարվում, բայց ըստ էության մենք վարում ենք ակտիվ քաղաքականություն: Պետք է ավելի լավ լուսաբանել այդ հարցը, որպեսզի և՛ մեր դիրքորոշումը հստակ լինի, և՛ կառավարության: Ի վերջո, սա այն հարցն է, որտեղ չի կարելի պահմտոցի խաղալ: Դրական լուծումն այն է, որ Արցախը պետք է դառնա առանձին սուբյեկտ Միության կազմի մեջ, իհարկե, հեռանկարում ունենալով դեկտեմբերի 1-ի որոշման իրագործումը:

■